իրավասու ե՞ք դուք ֆինանսական օգնություն ստանալու:

Ամենայն հավականությամբ այո՛: Covered California-ին անդամագրվողների գրեթե 90% ստանում են ֆինանսական օգնություն: Ֆինանսական օգնության չափը կախված է ընտանիքի եկամտից, ընտանիքի չափից և բնակության վայրից:

Դուք կարող եք վճարել ամսեկան այնքան քիչ, որքան $0 ձեր ծրագրի համար և դուք չեք վճարի ձեր եկամտի 8.5%-ից ավելին մեր նշաձողային Արծաթե ծրագրի համար: Դուք կարող եք նաև իրավասու լինել ցածր կամ անվճար Medi-Cal-ի համար:

Մեր հաշվարկային անգլերեն ծրագրի միջոցով ձեր ամսական վճարը գնահատելու համար սկանավորեք QR կոդը, կամ այցելեք CoveredCA.com/#quick-calculator

ԻՆՉՆԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՒ՞Մ Է ՈՒՆԵՆԱԼ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

Կալիֆորնիայում մարդկանց մեծամասնությունից օրենքով պահանջվում է ունենալ բժշկական ապահովագրություն կամ վճարել հարկային տույժ. $850/մեծահասակի համար + $425/18 տարեկանը չլրացած երեխայի համար: Առավելագույն տույժը մինչև $2,550 է հարկատու ընտանիքների համար: Սակայն, եթե ձեր ընտանեկան տարեկան եկամուտը գերանզանցում է ձեր Կալիֆորնիայի հարկային շեմը, ապա ձեր հարկային տույժը կլինի ձեր ընտանեկան տարեկան եկամուտի 2.5%-ը:

Կա՞ն այլ հարցեր: Այցելեք CoveredCA.com/support

Covered California complies with applicable Federal civil rights laws and does not discriminate on the basis of race, color, national origin, age, disability, or sex.
Atención: si habla español, tiene a su disposición servicios gratuitos de asistencia lingüística. Llame al 1.800.300.0213 (TTY: 1.888.889.4500).
注意：如果您使用繁體中文，您可以免費獲得語言援助服務。請致電 1.800.300.1533 (TTY 1.888.889.4500).

ինչ է հարկավոր անդամագրվելու համար:

Այս բժշկական ապահովագրությանը դիմելու համար յուրաքանչյուր ընտանիքի անդամի անհրաժեշտ է հետևյալը.

- **Տան փոստային ինդեքս**
- **Ծննդյան թվական**
- **Ընտանիքի ընթացիկ եկամտի ապացույց***
- **Կալիֆորնիայի ID կամ վարորդական իրավունք**
- **Սոցիալական քարտի համար կամ հարկատույի անձնական նույնականացման համար, եթե ունեք**
- **Քաղաքացիության կամ օրինական ներկայության ապացույց (օրինակ՝ ԱՄՆ անձնագիր, քաղաքացիության վկայական կամ բնականացման փաստաթուղթ, գրին քարտ կամ վավեր վիզա)****

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՆՎՃԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊՎԵԼ ՄԵԶ ՀԵՏ

CoveredCA.com | 800.996.1009 (հայերեն)

*Բոլոր անդամների ընթացիկ հարկային եկամտի ապացույցը, ինչպիսիք են վերջին հարկային հայտարագրերը, W-2, վճարման անդորրագրերը: Ձեր խնամքի ներքո գտնվող անձի եկամուտը պետք է ներառվի միայն այն դեպքում, երբ եկամտի մակարդակը պահանջում է հարկային հայտարարագրի ներկայացում: Հարկատու ընտանիք է համարվում այն անձը, ով հարկեր է ներկայացնում որպես հիմնական հարկ վճարող, իսկ ընտանիքի մյուս անդամները ներկայացված են որպես իր խնամքի ներքո գտնվող անձեր հարկային փաստաթղթում: Եթե դուք հարկեր չեք ներկայացնում, դուք դեռ կարող եք Medi-Cal-ի միջոցով ստանալ անվճար կամ էժան ապահովագրություն:

**Դուք կարող եք դիմել ձեր իրավասու երեխայի կամ ամուսնու համար նույնիսկ եթե դուք իրավասու չեք:

HYE-0723

այս կողմ դեպի բժշկական ապահովա-գրություն

ԵՐԲ, ՈՐՏԵՂ ԵՒ ԻՆՉՊԵՍ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼ

COVERED CALIFORNIA

COVERED CALIFORNIA

Սկսելու համար այցելեք
CoveredCA.com կամ զանգահարեք 800.996.1009
(հայերեն):

ՄԵՆՔ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՆՔ ՁԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Covered California-ն ստեղծվել է, որպեսզի օգնի կալիֆորնիացիներին համեմատել և մատչելի գնով անդամագրվել ճանաչված բժշկական ապահովագրության ծրագրերին: Անդամագրված մարդկանց մեծամասնությունը ստանում է ֆինանսական օգնություն, և բոլորին երաշխավորված է նույն, բարձրորակ բշժկական ապահովագրությունը:

ՄԵՆՔ ԱՅՍՏԵՂ ԵՆՔ ՁԵԶ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Covered California-ն անվճար, մասնագիտացված օգնություն է առաջարկում առցանց , անձամբ և հեռախոսով 13 լեզուներով, նաև լսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար:

ԲԱՑ ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 1-ից Մինչեւ Հունվարի 31

Medi-Cal- ը և Special Enrollment-ը հասանելի են ամբողջ տարվա ընթացքում. Special Erollment-ը թույլ է տալիս Կալիֆորնիայի բնակիչներին ձեռք բերել ապահովագրութուն որոշակի իրադարձությունից 60 օրվա ընթացքում, ինչպիսիք են բժշկական ապահովագրության կորուստը, տնային տնտեսության չափի փոփոխությունը, կամ դեպի Կալիֆորնիա կամ Կալիֆորնիայի ներսում տեղափոխությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք CoveredCA.com/special-enrollment:

բացահայտեք ձեր բժշկական ապահովագրության ընտրանքները:

Covered California ն առաջարկում է ապահովագրության չորս աստիճան՝ բրոնզ, արծաթ, ոսկի և պլատին: Ապահովագրական ընկերությունները վճարում են ապահովագրված ծառայությունների մի մասը, և յուրաքանչյուր աստիճանում առաջարկվող առավելությունները նույնն են ՝ անկախ ապահովագրական ընկերության ընտրությունից:

Այցելեք CoveredCA.com և ընտրեք «Shop and Compare»՝ տեսնելու համար, թե որ ճանաչված բժշկական ապահովագրական ծրագրերն են ձեզ հարմար:

Ընտրեք **Պլատինե** կամ **Ոսկի**, և դուք կվճարեք ավելի բարձր ամսավճար, բայց ավելի քիչ կվճարեք բժշկական ծառայությունների համար, երբ դրանք անհրաժեշտ լինեն:

Ընտրեք **Արծաթ** կամ **Բրոնզ** և դուք կվճարեք ավելի ցածր ամսավճար, բայց ավելի շատ կվճարեք բժշկական ծառայությունների համար, երբ դրանք անհրաժեշտ լինեն:

Նվազագույն ապահովագրության ծրագիրը հասանելի է մինչև 30 տարեկան աձանց համար կամ 30-ից բարձր այն անձանց համար, ովքեր կարիքավորության պատճառով բացառություն են ստացել:

ՍՏԱՆԴԱՐՏ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ ԸՍՏ ՄԱԿԱՐԴԱԿԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԲՐՈՆԶ Հատուցում է միջին տարեկան արժեքի 60%-ը	ԱՐԾԱԹ Հատուցում է միջին տարեկան արժեքի 70%-ը	ՈՍԿԻ Հատուցում է միջին տարեկան արժեքի 80%-ը	ՊԼԱՏԻՆ Հատուցում է միջին տարեկան արժեքի 90%-ը
Անհատական / ընտանեկան նվազավճար	$6,300 / $12,600	$5,400 / $10,800**	Նվազավճար չկա	Նվազավճար չկա
Տարեկան կանխարգելիչ խնամքի այց	Առանց վճարի	Առանց վճարի	Առանց վճարի	Առանց վճարի
Առաջնային խնամքի այցի համավճար	$60*	$50	$35	$15
Շտապ օգնության այցելության համավճար	$60*	$50	$35	$15
Շտապ օգնության բաժանմունքի վճարում	$40+	$450	$350	$150
Ոչ բրենդային դեղերի համավճար	$17	$19	$15	$7
Մեկ անձի տարեկան մաքսիմալ ծախսը	$9,100	$9,100	$8,700	$4,500
Ընտանիքի տարեկան մաքսիմալ ծախսը **	$18,200	$18,200	$17,400	$9,000

Աղյուսակը չի ներառում բոլոր բժշկական համավճարների և համաապահովագրության չափերը: Ամբողջական տեղեկատվության համար այցելեք CoveredCA.com:
*Բրոնզե ծրագրերի դեպքում հիմնական խնամքի կամ հրատապ խնամքի առաջին երեք այցելությունների համար նվազավճարը (deductible) չեղարկվում է: Լրացուցիչ այցելությունները գանձվում են ամբողջ արժեքով ՝ մինչև նվազավճարի կատարումը:
**Արծաթը միակ մակարդակն է, որտեղ ձեր նվազավճարը և այլ ծախսերը կարող են ավելի ցածր լինել՝ ելնելով ձեր ընտանիքի եկամուտից:
+40% պահումներից հետո, մինչև տարեկան գրպանից ծախսված առավելագույն սահմանաչափը